NASDAQ OMX

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՐՈՇՈՒՄ

28 մարտի 2018 թվականի N ՑՊ-008-03/18

ք. Երևան

ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԸ ՑՈՒՑԱԿԵԼՈՒ ԵՎ ՊԱՐՏԱՏՈՄՍԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ (Abond) ՑՈՒՑԱԿՈՒՄ ԸՆԴԳՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով ԱՐԱՐԱՏԲԱՆԿ բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ Ընկերություն) 2018 թվականի մարտի 12-ի հայտը 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 320,000 (երեք հարյուր քսան հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակելու և պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում ընդգրկելու վերաբերյալ, ինչպես նաև «ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» Բաց բաժնետիրական ընկերություն (այսուհետև՝ Օպերատոր) Ցուցակման հանձնաժողովի կողմից 2018 թվականի մարտի 27-ին ներկայացված եզրակացությունը,

Ղեկավարվելով Օպերատորի «Արժեթղթերի ցուցակման և առևտրին թույլատրման կանոնների» 11-րդ գլխի 53 կետով, 16-րդ գլխով և Օպերատորի կանոնադրության 9-րդ գլխի 9.59) կետի զ) ենթակետով, Գլխավոր տնօրենը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ի 25 (քսանհինգ) ԱՄՆ դոլար անվանական արժեքով, 51 ամիս շրջանառության ժամկետով, արժեկտրոնային, տարեկան 5.25% արժեկտրոնային եկամտաբերությամբ, 320,000 (երեք հարյուր քսան հազար) հատ անվանական արժեկտրոնային պարտատոմսերը, որոնց «Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիա» ԲԲԸ կողմից շնորհվել է AMARBKB2HER3 ծածկագիրը, ցուցակել և ընդգրկել պարտատոմսերի հիմնական (Abond) ցուցակում, շնորհել ARBKB2H հապավումը, ինչպես նաև թույլատրել դրանցով հասցեական առևտուրը և ռեպո գործարքների կնքումը:
2. Հանձնարարել «Բորսայական ծառայությունների դեպարտամենտ»-ին՝ սույն որոշման ընդունման օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում, որոշման մեկ օրինակն ուղարկել Ընկերությանը և որոշման մասին տեղեկություններ հրապարակել Օպերատորի առևտրային համակարգի և ինտերնետային կայքի միջոցով:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի ապրիլի 3-ին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ **ՀԱՅԿ ԵԳԱՆՅԱՆ**

«ՆԱՍԴԱՔ ՕԷՄԷՔՍ ԱՐՄԵՆԻԱ» ԲԲԸ • ՀՀ, Երևան 0010, Մհեր Մկրտչյան 5բ • www.nasdaqomx.am
հեռ.՝ +374 10 543 321 • ֆաքս՝ +374 10 543 321 լր 135 • էլ. փոստ՝ info@nasdaqomx.am